ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» փետրվարի 2016 թվականի N: 24 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՌՈՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հոռոմի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ 2016 թվականի փետրվարի 2-ի տեղեկանքը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հոռոմի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2016 թվականի փետրվարի 3-ի բացատրությունը.

որոշում եմ.

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հոռոմի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Գալստյանին հայտարարել նկատողություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հոռոմի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Գալստյանին՝ 5 օրվա ընթացքում վերացնել ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված խախտումներն ու թերությունները և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է